

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին**

**ՀՈՂՎԱԾ 1.** «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՅՕ-177-Ն օրենքի (այսուհետեւ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը եւ 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

**ՀՈՂՎԱԾ 2.** Օրենքի 39-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը լրացնել հետեւյալ նոր նախադասությամբ.

«Ապահովագրական գործունեության լիցենզիան ներառում է դրանում նշված դասով (դասերով) վերաապահովագրական գործունեությունը:»:

2. 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Ընկերությունը կարող է միաժամանակ իրականացնել վերաապահովագրական գործունեություն միայն այն դասով, որով ունի ապահովագրական գործունեության լիցենզիա:»:

3. 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Վերաապահովագրական ընկերությունը կարող է միաժամանակ իրականացնել 7-րդ հոդվածում նշված կյանքի եւ ոչ կյանքի ապահովագրության դասերով վերաապահովագրական գործունեություն:»:

**ՀՈՂՎԱԾ 3.** Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերից հանել «եւ վերաապահովագրության» բառերը:

**ՀՈՂՎԱԾ 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

### ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

22.04.1996թ. Լյուքսեմբուրգում ստորագրված Գործընկերության եւ համագործակցության մասին մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության եւ մյուս կողմից՝ Եվրոպական համայնքների (այսուհետեւ՝ Համայնք) ու դրանց անդամ պետությունների միջեւ համաձայնագրի (ուժի մեջ է մտել 01.07.1999թ.) "Օրենսդրական համագործակցություն" 5-րդ բաժնի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական կապերն ուժեղացնելու համար կարելու պայման է սահմանվել Հայաստանի Հանրապետությունում գործող, ինչպես նաեւ ապագա օրենսդրության մերձեցումը Համայնքի օրենսդրությանը: Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել իր օրենսդրությունն աստիճանաբար դարձնել համատեղելի Համայնքի օրենսդրության հետ:

"Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին" (22.05.2007թ. թիվ 30-177-Ն) ՀՀ օրենքի ընդունմամբ փորձ է արվել համապատասխանեցնելու Հայաստանի ապահովագրության ոլորտը Համայնքի օրենսդրությանը: Սակայն, վերաապահովագրության լիցենզավորման մասով համապատասխանություն չի ապահովվել:

Մասնավորապես, Համայնքի օրենսդրությանը համապատասխան ապահովագրական ընկերություններն իրավունք ունեն միաժամանակ իրականացնելու նաեւ վերաապահովագրական գործունեություն միայն այն դասով, որի համար ունեն ապահովագրության գործունեության լիցենզիա: Ի տարբերություն դրան, Հայաստանում ապահովագրական ընկերությունների կողմից վերաապահովագրության գործունեություն իրականացնելու համար եւս պահանջվում է առանձին լիցենզիա, որը ներառում է կյանքի կամ ոչ կյանքի ապահովագրության բոլոր դասերը:

Ներկայացվող օրենքի նախագծով վերացվում է վերաապահովագրության լիցենզավորման մասով հակասությունը՝ Հայաստանի Հանրապետության եւ Համայնքի օրենսդրությունների միջեւ:

**Չեղիճակներ՝** [Վահան Յովհաննեսյան](#), [Արա Նռանյան](#), [Արծվիկ Մինասյան](#), [Արմեն Ռուստամյան](#), [Արտյուշ Շահբազյան](#)